ԱՂՕԹՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ

ՏԷր Աստուած, հզօր եւ գթած, ամբողջ սրտով շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի՝ ամէն բանի համար, որ կր պարգեւես ինծի։

Կ'աղաչե՛մ, քու շնորհքդ եւ իմաստութի՛ւնդ տուր ինծի, որպեսզի պատուիրաններդ եւ օրենքներդ գործադրեմ, զերծ մնամ հոգիի ու մարմնի բոլոր տեսակի փորձանքներեն, եւ հեռու՝ բոլոր անմիտ սխալներեն ու մոլութիւններեն։

Քու երկի'ւղդ դրոշմե հոգիիս մեջ, որպեսզի մաքուր եւ առաքինի կեանք մը ապրիմ։ Դո'ւն ուղղէ իմ խօսքերս,

որպեսզի միշտ լաւը եւ քեզի հանելին ընտրեմ։

Իմ սրտիս մէջ ծաղկեցո'ւր առաքինութեանց սերմերը։ Ծնորհէ' որ միշտ խոնարհ ըլլամ. հեզ եւ համեստ՝ վարքով, բարի եւ մաքուր՝ խորհուրդներով, խօսքով ու գործով, ճշմարտախօս ըլլամ եւ ուրիշին չվնասեմ իմ անտեղի խօսքերովս։ Հաւատարիմ եւ ժրաջան ըլլամ պարտականութիւններուս մէջ։ Թող արդար, բարեմիտ, իրաւունքը սիրող եւ ողորմած ըլլամ իմ բոլոր գործերուս մէջ եւ ընկերներուս հանդէպ։ Մեծարող եւ հնազանդ ըլլամ ծնողներուս եւ մեծերուս, բարի, քաղցր եւ սիրալիր՝ բոլոր մարդոց հանդէպ։

Հեռո՛ւ պահէ զիս ծուլութենէ եւ դատարկաբանութենէ։ Փրկէ՛ զիս չար ընկերներէ, չար օրինակներէ, բոլոր տեսակի մարմնական թուլութիւններէ, եւ տեսանելի ու անտեսանելի վտանգներէ եւ բարոյական փորձութիւններէ։

Տէ՛ր Աստուած, լսէ՛ իմ այս աղօթքս, քու սիրոյդ մէջ պահէ բոլոր ընտանիքս ու բարեկամներս, եւ բոլորին ալ առատօրէն տո՛ւր քու բարի պարգեւներդ։ Որովհետեւ քո՛ւկդ են փառքը, պատիւն ու զօրութիւնը յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

PRAYER FOR THE YOUTH

Almighty and merciful God, praise be to You for granting me this life. I beseech You to grant me Your blessings and divine wisdom so that I may heed Your commandments and steer clear of impurities and temptations of mind, body, and soul.

Grant my soul the spirit of awe so that I may live a virtuous life with You as my guide, so that I may speak and do all that is pleasing to You.

Plant in me the seeds of righteousness and grant me to be humble in demeanor, pure in my thoughts, words, and actions, and unwavering in the carrying out of my responsibilities. May I be honorable and well-intentioned in my deeds and in my actions towards my friends, reverent and obedient towards my parents and elders, and loving towards all mankind.

Keep me from descending into laziness and engaging in hearsay, protect me from harmful influences and bodily transgressions, visible and invisible enemies, and all temptations.

Almighty God, accept my prayers and supplications; keep my family and friends in Your unbound love and care and grace us all with Your abundant blessings. For thine is the power and the glory, for ever and ever. Amen.